ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
ՀՏՋՀ-ՆՓ- ԽԲՄ-ԾՁԲ-2024/1 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան « 18 » հունիս 2024թ.
ժամը՝ 10:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«15» մայիս 2024թ. թիվ 776-Ա հրամանով** ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան բնակավայրում մարզադպրոցի կառուցման, ՀՀ Արմավիրի մարզի Ծաղկունք բնակավայրում, Շիրակի մարզի Մարալիկ քաղաքում և Քարաբերդ բնակավայրում նախատեսվող մանկապարտեզների տեղակապման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության խորհրդատվական ծառայությունների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ՆՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/1** ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի **գնահատման նիստին** (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Աշոտ Խաչատրյան ՝ Հանձնաժողովի նախագահ

Սերգեյ Հարությունյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ /բացակա անդամ/

Արամ Գալստյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Էդուարդ Ջանջուղազյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Նարինե Կարապետյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ

Հանձնաժողովը, վերսկսելով կասեցված նիստը և հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1.1 «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ.

*«Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով հրավերով սահմանված է նախորդող վեց տարվա (2018-2023թթ) ընթացքում պատշաճ ձևով իրականացված նմանատիպ առնվազն 10 պայմանագիր կամ 10 առաջադրանքի կատարված լինելը մեկ կամ մի քանի պայմանագրերում, սակայն մասնակցի կողմից ներկայացվել է նախորդող վեց տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ 6 կատարված առաջադրանք:

*Մասնակցի աշխատակազմում ներգրավված Ճարտարապետի, Էլեկտրամատակարարման, ինժեներ ջերմաէներգետիկի, ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետների մոտ CV ձևաչափում բացակայում է հրավերով սահմանված առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձը, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետի որակավորումը հավաստող փաստաթղթում՝ դիպլոմում, մասնագետի որակավորումը չի համապատասխանում ջրահեռացման մասնագետի գործունեությանը:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը:

2.2 Ծանուցել Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մինչև նիստի կասեցման վերջնաժամկետը՝ 17.06.2024թ. ներառյալ:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ

3.1 «Մասնակից «ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

4.Տեղեկություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

4.1 ՀՏՋՀ-ՆՓ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/1 ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն ստացվել:

5.Հանձնաժողովը որոշեց.

5.1 Ընտրված մասնակից ճանաչել՝

Հ/Հ	Գնման Առարկան	Մասնակցի անվանումը	Պայմանագրի գինը ՀՀ դրամ
1	նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ	«ՀՀ Նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	3 000 000

5.2 «ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին տեքստը:

5.3 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում:

Հանձնաժողովի նիստը նախագահող՝	
Աշոտ Խաչատրյան	_____
անդամներ՝	
Արամ Գալստյան	_____
Էդուարդ Ջանջուղազյան	_____
Նարինե Կարապետյան	_____
քարտուղար՝	
Ռոզա Ասատրյան	_____